

գողերուն եւ ոստիկաններուն կիներուն մատնութեան շնորհիւ մէջտեղ կը հանէ յանցագործները: Չգայացունց դատավարութիւն: Դիմակները վար կ'ամնուին, արդարութիւնը կը գործադրուի եւ դերասանուհիին Աւստրալիայէն եկող եղբայրը կ'ամուսնանայ առաջին ոստիկանին կնոջ հետ ու քիչ յետոյ կը սիրահարուի առաջին գողին կնոջը, տարի մը վերջ կ'ամուսնալուծուի, սիրուհին ալ կը լքէ ու կը նշանուի երկրորդ ոստիկանին կնոջը հետ՝ խենթի պէս սիրահարուելով երկրորդ գողին կնոջը: Յոյս ունիմ, որ այս վէպս առնուազն մէկ միլիոն օրինակ պիտի տպուի: Ի՞նչպէս կը գտնէք:

-Կատարեալ, գլուխգործոց մը: Ճարտարապետութիւն, երեւակայութիւն, թռիչք, խորք, գիւտ, նրբութիւն, զգացում: Ամէն ինչ կայ: Կատարելութիւն մըն է: Պետք է, որ մէկ միլիոնէ աւելի ծախուի այսպիսի գեղարուեստական բարձր ստեղծագործութիւն մը:

-Մի մոռնաք, որ դեռ երեք տարուան գրող եմ: Երեք տարի վերջը յաջողութիւնս մեծ պիտի ըլլայ, ու ես՝ միլիոնատեր:

-Կասկած չունիմ:

-Իսկ դուք ի՞նչ կը շահիք...

Ի՞նչ սուտ խօսեի, Աստուած իմ, ի՞նչ սուտ... Մատիտը առի ու թերթի մը վրայ գրեցի հինգ հազար: Անգլիացի գրողը աչքերը բացաւ եւ ըսաւ.

-Օրակա՞ն, շաբաթակա՞ն, թէ ամսական...

Ասոր ի՞նչ ըսէի: Նետեցի.

-Ամսական:

-Ի՞նչ կ'ըսէք: Այդքան քի՞չ, այդքան քի՞չ... Եւ ինձմէ աւելի հին գրող մը ըլլալով: Երեւակայեցէք, որ երեք տարի առաջ Լոնտոնի փողոցներուն մէջ լուցկի կը ծախէի ես ու հիմա տարեկան 160,000 կը շահիմ: Իսկ դուք... Ահաւոր է մեր մէջ եղած տարբերութիւնը:

-Տարբերութիւնը այնքան ալ մեծ չէ: Դուք երեք տարի առաջ լուցկի կը ծախէք եղեր փողոցները: Ես ալ երեք տարի վերջը պիտի պարտաւորուիմ լուցկի ծախել: